

ՀՀ ԳՆԱՃԻ ՇԱՐԺՆԹԱՅԸ 2008-2020 ԹԹ.

Դիանա Գևորգյան

Տնտեսագիտության թեկնածու
ՀՊՏՀ մակրոէկոնոմիկայի ամբիոն
ՀՀ, Երևան, Նալբանդյան 128

Էլ. հասցե՝ diana.gevorgyan91@gmail.com

Հոդվածը ներկայացվել է 21.12.2021, գրախոսվել է 11.11.2022, ընդունվել է տպագրության 12.12.2022
DOI: 10.53548/0320-8117-2022.3-183

Ներածություն

Ինչպես ցանկացած երկրի, այնպես էլ Հայաստանի Հանրապետության տնտեսության մրցունակության գնահատման տեսանկյունից առանցքային նշանակություն ունի նաև գնաճի շարժընթացի ուսումնասիրությունը: Այն խաթարում է մրցունակության բնականոն ընթացքը: Երկրները փորձում են պահպանել գների կայուն մակարդակը և չափավոր աճը, քանի որ գնաճի բարձր տեմպերը հանգեցնում են տնտեսության բնականոն ռիթմի խաթարմանը: Այն կարող է նվազեցնել նաև խնայողությունների իրական արժեքը, երբ իրական տոկոսադրույքները բացասական են:

Գնաճի շարժընթացը ՀՀ-ում

Վերջին տարիներին ՀՀ-ում գնաճը կրում է տատանողական բնույթ: Սա պետք է համարել օբյեկտիվ օրինաչափություն, որը բնորոշ է գրեթե բոլոր զարգացող և անցումային տնտեսությամբ երկրներին: Պատճառն այն է, որ այդպիսի տնտեսությունները տարբեր գնաճային ճնշումների նկատմամբ խիստ զգայուն են:

Պետք է նշել, որ վերջին տարիներին գնաճի տեմպը ՀՀ-ում բարձր չէ և կառավարելի է¹: Ինչպես աշխարհի գրեթե բոլոր երկրների կենտրոնական բանկերը, ՀՀ կենտրոնական բանկը (ԿԲ) ևս նպատակ է հետապնդում ապահովելու գների, ինչպես նաև ֆինանսական կայունությունը: Գների կայունությունը տնտեսական գործունեության համար անխաթար պայմանների ստեղծման հիմնական նախադրյալներից է: Գների կայունության ապահովմամբ ԿԲ-ն նպաստում է երկարաժամկետ հատվածում բարձր տնտեսական աճին, հետևաբար նաև բնակչության կենսամակարդակի բարձրացմանը:

¹ Ֆինանսական կայունության հաշվետվություն 2016, ՀՀ ԿԲ, https://www.cba.am/AM/ppperiodicals/fin_kay_17.pdf, էջ 7:

Միջազգային փորձի հիման վրա իրականացված վերլուծությունները ցույց են տալիս, որ բարձր և տատանողական գնաճը խոչընդոտում է տնտեսության զարգացմանը: Մասնավորապես, բարձր և տատանողական գնաճի պայմաններում, որը, ի դեպ, ուղեկցվում է նաև գների փոփոխման հետագա անորոշությունների մեծացմամբ, կրճատվում են իրական եկամուտներն ու խնայողությունները, ինչպես նաև ներդրումները երկարաժամկետ բիզնես ծրագրերում: 2007 թ. սկսած՝ ՀՀ-ում գնաճի նպատակային թիրախ է սահմանվել 4%-ը՝ $\pm 1.5\%$ շեղման թույլատրելի միջակայքով: Գնաճը չափվում է սպառողական գների համաթվի միջոցով, որը սպառողական զամբյուղում ընդգրկված ապրանքների և ծառայությունների գների միջին մեծությունն է: Սակայն 2017 թ. չորրորդ եռամսյակում տնտեսական աճը կազմել է 2.5%, որի պարագայում 2017 թ. միջին տնտեսական աճը 2.25% է (զձ.)²: 2018 թ. երկրորդ եռամսյակում, սեզոնային ապրանքների գնանկմամբ պայմանավորված, գնաճը որոշակիորեն դանդաղել է: 2018 թ. առաջին կիսամյակում պահպանվել է բարձր տնտեսական ակտիվություն՝ հիմնականում մասնավոր հատվածի ներդրումների բարձր աճի հետ կապված: Հումքային և պարենային ապրանքների շուկաներում պահպանվել են գնային համեմատաբար բարձր մակարդակները՝ պայմանավորված կայուն պահանջարկի պարագայում առաջարկի գործոնների և դրանց առնչվող խնդիրներով³:

Վերջին տարիներին ՀՀ-ում նկատվում է գնաճի տեմպի անկում: 2013-2015 թթ. ՀՀ ԿԲ-ի կողմից վարվող դրամավարկային քաղաքականությունը բնութագրվում է չեզոքից դեպի ընդլայնող ուղղվածությամբ: ՀՀ ԿԲ-ն այս ժամանակահատվածում, ընդհանուր առմամբ, թուլացրել և մեղմել է դրամավարկային պայմանները՝ ակնկալելով նպաստել գնաճի ցուցանիշի կայունացմանը (4 ± 1.5) և համախառն պահանջարկի ընդլայնմանը: Սակայն 2014 թ. տարեվերջը կարելի է առանձնացնել որպես ֆինանսական և արժույթային շուկաներում ձևավորված լարվածության ժամանակահատված, որին ՀՀ ԿԲ-ն արձագանքել է՝ ճշգրտելով դրամավարկային քաղաքականության ուղղությունը ընդլայնողից դեպի զսպող: 2015 թ. տարեվերջից նախ իրականացվել են մակրոպրոդեցիալ⁴ մի շարք միջոցառումներ, ապա անփո-


² ՀՀ ԿԲ, Գնաճի հաշվետվություն, Դրամավարկային քաղաքականության ծրագիր, 1-ին եռամսյակ, 2018, էջ 4 (36), https://www.cba.am/AM/ppperiodicals/gnach_I_18.pdf

³ ՀՀ ԿԲ, Գնաճի հաշվետվություն, Դրամավարկային քաղաքականության ծրագիր, 3-րդ եռամսյակ, 2018, էջ 4-7 (38), https://www.cba.am/AM/ppperiodicals/gnach_III_18.pdf

⁴ Մակրոպրոդեցիալ գործիքների արդյունավետ ընտրության հիմքում ընկած են մակրոպրոդեցիալ քաղաքականության միջանկյալ նպատակները, որոնք, ըստ էության, բնութագրում են

փոխ են թողնվել դրամավարկային պայմանները, և միայն տարվա երկրորդ կեսից գնաճային սպասումների նվազմանը զուգահեռ մեղմվել են դրամավարկային պայմանները:

Գծապատկեր. Գնաճի շարժընթացը ՀՀ-ում 2008-2020 թթ.
(ըստ սպառողական գների համաթվի, տարեկան %)⁵



2016 թ. ընթացքում ՀՀ ԿԲ-ն իրականացրել է դրամավարկային պայմանների շարունակական մեղմում, և գնաճային սպասումները մեղմվել են ավելի արագ տեմպերով: Նպաստող գործոններից է եղել նաև բնական գազի սակագնի իջեցումը:

2016 թ. տարեսկզբից ՀՀ սպառողական շուկայում արձանագրվել է գնանկումային միջավայր: Հուլիսին, նախորդ տարվա հուլիսի նկատմամբ, գնանկումը կազմել է 1.3%, որը պայմանավորվել է պարենային ապրանքախմբում (ներառյալ ոգելից խմիչքը և ծխախոտը) արձանագրված 2.2% գնանկումով (բացասական նպաստումը գնաճին՝ 1 տոկոսային կետ), ոչ պարենային ապրանքների գների 3% գնանկումով (բացասական նպաստումը՝

համակարգային ռիսկի դրսևորման հնարավոր աղբյուրները: Այսինքն, նախ գնահատվում են ռիսկերի հավանական աղբյուրները, դրանց հարաբերական ուժգնությունը, որից ածանցված թիրախավորվում են մակրոպրոդենցիալ քաղաքականության կոնկրետ միջանկյալ նպատակներ, և ընտրվում են մակրոպրոդենցիալ համապատասխան գործիքներ:

⁵ World Bank Group, Inflation, https://data.worldbank.org/indicator/FP.CPI.TOTL.ZG?locations=AM&year=2006&year_low_desc=true

0.6%-ային կետ) և ծառայությունների սակագների 0.9% հավելաճով (նպաստումը գնաճին՝ 0.3%-ային կետ)⁶:

Տնտեսության մրցունակության գնահատման տեսանկյունից անկյունաքարային են նաև ազգային արժույթի փոխարժեքի դերն ու նշանակությունը: 2015-17 թթ. ՀՀ դրամի փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ տատանողական բնույթ է ունեցել:

2017 թ. չորրորդ եռամսյակում միջբանկային դրամային տոկոսադրույքները նախորդ եռամսյակի համեմատությամբ բարձրացել են: Այդ ժամանակահատվածում ԱՄՆ-ի դաշնային պահուստային համակարգը, շարունակելով դրամավարկային պայմանների աստիճանական խստացումը, ևս 0.25%-ային կետով բարձրացրել է պահուստային միջոցների տոկոսադրույքները: ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի անվանական փոխարժեքը հիմնականում դրսևորել է կայուն վարքագիծ՝ արժեզրկվելով 1%-ով: ԱՄՆ դոլարի նկատմամբ գործընկերների արժույթները նույնպես արժեզրկվել են: Ամբողջությամբ հակակշռելով ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի արժեզրկմանը՝ ՀՀ դրամի անվանական արդյունավետ փոխարժեքը չորրորդ եռամսյակում մնացել է նախորդ եռամսյակի մակարդակում. արժևորում՝ ընդամենը 0.1%: Անվանական արդյունավետ փոխարժեքը մոտ 1.5%-ային կետով արժևորվել է՝ պայմանավորված նախորդ եռամսյակի նկատմամբ ՀՀ տնտեսության գնաճի տեմպերի արագացմամբ⁷:

Պետք է նկատել, որ տնտեսության մրցունակության վրա նշանակալի ազդեցություն է ունենում նաև ազգային արժույթի փոխարժեքը: Այսպես՝ ուժեղ ազգային արժույթը զսպում է արտահանումը՝ պայմաններ ստեղծելով ներմուծման ակտիվացման համար: Դա է պատճառը, որ շատ երկրներ միջազգային շուկայում տեղական արտադրության ապրանքների և ծառայությունների իրացման ծավալների աճը խթանելու համար երբեմն վարում են ազգային արժույթի արժեզրկման քաղաքականություն: Սակայն պետք է նկատել, որ ՀՀ-ում այդպիսի քաղաքականության կիրառումը կարող է ճիշտ հակառակ ազդեցությունն ունենալ: Պատճառն այն է, որ ՀՀ-ն, հարուստ չլինելով բնական ռեսուրսներով, պարտադրված է դրանք ներմուծել: Հատկապես մեծ է ՀՀ տնտեսության կախվածությունը էներգակիրներից՝ նավ-

⁶ ՀՀ Ազգային ժողով, ՀՀ տնտեսական և հարկաբյուջետային հիմնական ցուցանիշների կանխատեսումը, http://www.parliament.am/draft_docs5/K-862_arajarkutyunnerov/1.2.Uxerc.Mas.1b.pdf, էջ 91-93 (123)

⁷ Գնաճի հաշվետվություն 2018, ՀՀ ԿԲ, https://www.cba.am/AM/ppperiodicals/gnach_I_18.pdf, էջ 27-29 (36):

թից և գազից, իսկ վերջիններիս ձեռքբերման համար ՀՀ-ն վճարում է արտարժույթով: Այսպիսով՝ ազգային արժույթի դիրքերի թուլացման քաղաքականությունը կհանգեցնի ներքին շուկայում շատ ապրանքների և առաջին հերթին էներգակիրների գների աճի: Սա, իր հերթին, կունենա ընդգծված սոցիալական և տնտեսական բացասական դրսևորումներ: Այն ընկերությունները, որոնք չունեն արտահանման կողմնորոշում և օգտագործում են էներգակիրներ (հատկապես առաջին անհրաժեշտության ապրանքներ՝ հաց, աղ, ջուր, տրանսպորտ և այլն), պարտադրված կլինեն բարձրացնելու վաճառքի գները, ինչը կարող է հանգեցնել նոր սոցիալական ցնցումների: Այս առումով ՀՀ-ն կարծես թե չի կարող ազատորեն օգտվել թույլ արժութային քաղաքականության միջոցով միջազգային շուկայում տեղական ապրանքների ու ծառայությունների գնային մրցունակությունը բարձրացնելու հնարավորությունից:

2017 թ. չորրորդ եռամսյակում ԱՄՆ-ի դաշնային պահուստային համակարգի կողմից իրականացված և սպասվող դրամավարկային քաղաքականության ներքո գործընկեր երկրների արժութային շուկաներում արձանագրվել են ԱՄՆ դոլարի արժևորման ճնշումներ: Գործընկեր երկրների միջև կշռված անվանական փոխարժեքը 2017 թ. արժեզրկվել է 3%-ային կետով՝ պայմանավորված հիմնականում եվրոյի, թուրքական լիրայի և բուլղարական լևի արժեզրկմամբ (համապատասխանաբար՝ 1.1, 0.6 և 0.6 տոկոսային կետ նպաստում), մինչդեռ, ռուսական ռուբլին արժևորվել է: ՀՀ դրամի անվանական միջին փոխարժեքն ԱՄՆ դոլարի նկատմամբ արժեզրկվել է 0.7%-ով⁸:

2019 թ. սկզբին պահպանվել է 2018 թ. ձևավորված ցածր գնաճային միջավայրը, և ՀՀ ԿԲ-ն շարունակում է իրականացնել խթանող դրամավարկային քաղաքականություն, որի պարագայում, համախառն պահանջարկի վերականգնմանը զուգընթաց, գնաճը միջնաժամկետում կկայունանա նպատակային 4% ցուցանիշի շուրջ:

2018 թ. չորրորդ եռամսյակից մինչև 2019 թ. չորրորդ եռամսյակն ընկած ժամանակահատվածում 12-ամսյա գնաճը պահպանվել է ցածր մակարդակում՝ կազմելով 0.5%: 2019 թ. ընթացքում, պահպանվող ցածր գնաճային միջավայրում, ԿԲ-ն շարունակել է վարել խթանող դրամավարկային

⁸ Գնաճի հաշվետվություն 2017, ՀՀ ԿԲ, https://www.cba.am/AM/ppperiodicals/Gnach%201_17.pdf, էջ 40-42:

քաղաքականություն, սակայն մշտապես նախապատվությունը տրվել է գնաճի՝ իր նպատակային ցուցանիշի շուրջ աստիճանական խարսխմանը⁹:

Արտաքին աշխարհի հետ հարաբերություններում ՀՀ-ն համարվում է փոքր և բաց տնտեսություն ունեցող երկիր, ինչը նշանակում է, որ տնտեսական հոսքերի շարժը ազատականացված է: Վճարային հաշվեկշիռը հնարավորություն է ընձեռում գնահատելու երկրի արժութային և ֆինանսական վիճակը, կատարելու վերլուծություններ և դրանց հիման վրա էլ ավելի բարձր մակարդակի հասցնելու մակրոտնտեսական քաղաքականության մշակման գործընթացը: Այս տնտեսական գործիքը լավագույնս բնութագրում է երկրի սոցիալ-տնտեսական վիճակը: Այն նաև ցույց է տալիս, թե տվյալ երկիրը արտադրող է (երբ առկա է վճարային հաշվեկշռի դրական մնացորդ) կամ սպառող (երբ վճարային հաշվեկշռի մնացորդը բացասական է): Երկրի ընթացիկ հաշվի ճեղքվածքը առաջանում է ապրանքների և ծառայությունների արտահանման և ներմուծման տարբերությունից:

2019 թ. առաջին երեք եռամսյակներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ընթացիկ հաշվի պակասուրդը գերազանցում էր նախորդ տարվա ցուցանիշները: Ընթացիկ հաշվի պակասուրդը 2019 թ. երրորդ եռամսյակում կազմել է մոտ - 251 մլն ԱՄՆ դոլար, մինչդեռ 2018 թ. երկրորդ և երրորդ եռամսյակների ընթացքում գրանցվել են դրական ցուցանիշներ:

Ընթացիկ հաշվի պակասուրդ/ՀՆԱ հարաբերակցության տարեկան ցուցանիշը 2019 թ. հունվար-սեպտեմբերին արդեն կազմել է 8.5% և մոտենում էր վտանգավոր շեմին, ուստի դա լուրջ ահազանգ էր ՀՀ տնտեսության համար, որը կարող էր կանգնել արժութային և տնտեսական ճգնաժամերի առաջացման վտանգի առաջ:

2020 թ. ապրիլից 2021 թ. մարտն ընկած ժամանակահատվածը անբարենպաստ էր թե՛ ամբողջ աշխարհի և թե՛ Հայաստանի տնտեսության համար: 2019 թ. վերջին աշխարհում բռնկված նոր կորոնավիրուսի համավարակը, ինչպես նաև Հայաստանի և Արցախի Հանրապետության դեմ 2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեյջանի սանձազերծած պատերազմը Հայաստանը կանգնեցրին տնտեսական, սոցիալական և առողջապահական լուրջ խնդիրների առջև: ՀՀ-ում դրանք արտահայտվեցին տնտեսական ցուցանիշների անկմամբ և գնաճային ցածր միջավայրի ձևավորմամբ: Ստեղծված իրա-

⁹ Գնաճի հաշվետվություն 2020, ՀՀ ԿԲ, file:///C:/Users/diana.gevorgyan/AppData/Local/Temp/7z08B2B3D1A/Gnach_I_19.pdf , էջ 4-5:

վիճակում կառավարությունը իրականացրել է հարկաբյուջետային, իսկ Կենտրոնական բանկը՝ դրամավարկային խթանող քաղաքականություն: 2020 թ. ՀՀ տնտեսության տարեկան աճի տեմպը կանխատեսված 0.7%-ից ԿԲ-ն իջեցրել է -0.4%-ի, որը պայմանավորված էր ինչպես երկրորդ եռամսյակում ակտիվության անկման խորացմամբ, այնպես էլ ՀՀ տնտեսության վերականգնման դանդաղ տեմպով: Հայաստանում գնաճը 2020 թ. չի գերազանցել նախատեսված 4%-անոց մակարդակը: 2020 թ. նոյեմբերին գնաճը կազմել է 1,3%՝ 2019 թ. նույն ժամանակահատվածում գրանցված 1,1%-ի համեմատ, և 12-ամսյա գնաճը կազմել է 1,6%, ինչը դեռևս ցածր է նպատակային 4%-ի ցուցանիշից¹⁰:

Կենտրոնական բանկը վերաֆինանսավորման տոկոսադրույքը գրեթե չորս տարի՝ 2017 թ. փետրվարից աստիճանաբար իջեցնելուց հետո (երբ 6 %-ից այն հասավ 4,25%-ի), 2020 թ. դեկտեմբերին կտրուկ բարձրացրեց մեկ տոկոսային կետով՝ 5,25%: Այնուհետև, 2021 թ. ընթացքում ԿԲ-ն շարունակաբար բարձրացրեց վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ հասցնելով 7%-ի: Կենտրոնական դրամատունը տարիներով նվազեցնում էր վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ նպատակ ունենալով այդ կերպ առավել մատչելի դարձնել ֆինանսական միջոցների հասանելիությունը տնտեսությունում, ուստի նաև խթանել տնտեսական աճը: Այժմ Կենտրոնական դրամատունը գնաճի նման պայմաններում թանկացնում է դրամը՝ զսպելու գների աճը:

Եզրակացություններ

Գնաճը բացասական երևույթ չէ, եթե մարդկանց եկամուտները աճում են համաչափորեն: Այստեղ խնդիրը ոչ թե գնաճն է, այլ այն, որ մարդկանց եկամուտները համապատասխան չափով չեն աճել: Պաշտոնական վիճակագրությամբ՝ միջին անվանական աշխատավարձը 2020 թ. ընթացքում աճել է 5,4%-ով, իսկ գնաճը՝ 1.6%-ով:

Գրականություն

Գնաճի հաշվետվություն 2017, ՀՀ ԿԲ, https://www.cba.am/AM/ppperiodicals/Gnach%20I_17.pdf, էջ 42 (ներբեռնման օրը՝ 10.09.2021):

Գնաճի հաշվետվություն 2018, ՀՀ ԿԲ, https://www.cba.am/AM/ppperiodicals/gnach_I_18.pdf, էջ 36 (ներբեռնման օրը՝ 12.09.2021):

¹⁰ Դրամավարկային քաղաքականության հաշվետվություն ծրագրի կատարում 2021, ՀՀ ԿԲ, էջ 3-4, <https://www.cba.am/AM/ppperiodicals/MP%20report%202021Q1.pdf>

- Գնաճի հաշվետվություն 2018, ՀՀ ԿԲ, https://www.cba.am/AM/ppperiodicals/gnach_III_18.pdf էջ 38 (ներբեռնման օրը՝ 10.09.2021):
- Գնաճի հաշվետվություն 2020, ՀՀ ԿԲ, file:///C:/Users/diana.gevorgyan/AppData/Local/Temp/7z08B2B3D1A/Gnach_I_19.pdf, էջ 45 (ներբեռնման օրը՝ 10.09.2021):
- Դրամավարկային քաղաքականության հաշվետվություն ծրագրի կատարում 2021, ՀՀ ԿԲ էջ 35 <https://www.cba.am/AM/ppperiodicals/MP%20report%202021Q1.pdf> (ներբեռնման օրը՝ 10.09.2021):
- ՀՀ Ազգային ժողով, ՀՀ տնտեսական և հարկաբյուջետային հիմնական ցուցանիշների կանխատեսումը. http://www.parliament.am/draft_docs5/K-862_arajarkutyunnerov/1.2.Uxerc.Mas.1b.pdf, էջ 123 (ներբեռնման օրը՝ 10.09.2021):
- ՀՀ ԿԲ, Գնաճի հաշվետվություն, Դրամավարկային քաղաքականության ծրագիր, 1-ին եռամսյակ, 2018, էջ 36, https://www.cba.am/AM/ppperiodicals/gnach_I_18.pdf (ներբեռնման օրը՝ 10.09.2021):
- Ֆինանսական կայունության հաշվետվություն 2016, ՀՀ ԿԲ, https://www.cba.am/AM/ppperiodicals/fin_kay_17.pdf, էջ 61 (ներբեռնման օրը՝ 10.09.2021):
- World Bank Group, Inflation, https://data.worldbank.org/indicator/FP.CPI.TOTL.ZG?location=s=AM&year=2006&year_low_desc=true (ներբեռնման օրը՝ 10.09.2021):

ՀՀ ԳՆԱՃԻ ՇԱՐՇՆԹԱՅԸ 2008-2020 ԹԹ.

Դիանա Գևորգյան

Ամփոփում

Գնաճը խոչընդոտ է միջազգային մրցունակության համար: Յուրաքանչյուր երկիր փորձում է զսպել գնաճը, քանի որ այն հանգեցնում է տնտեսական լուրջ խնդիրների առաջացմանը: Անհրաժեշտ է պահպանել գնաճի առավելագույն ցածր մակարդակը, որ փողը չկորցնի իր արժեքը: Գնաճը բացասաբար է ազդում նաև գնողունակության մակարդակի վրա: Դա պայմանավորված է նրանով, որ դոլարն արժեզրկված է, և նրանք չեն կարող գնել բավարար չափով ապրանքներ և օգտվել ծառայություններից: Հետևաբար, պահանջարկը նվազում է:

Հավելենք, որ գնաճը իջեցնում է խնայողությունների իրական արժեքը, երբ իրական տոկոսադրույքները բացասական են: Սա նշանակում է, որ տոկոսադրույքը չի ճշգրտվում գների ընդհանուր մակարդակը բարձրացնելու համար: Վարկառուի պարտքի իրական արժեքը նվազել է: Եթե գնաճը դառնում է անկանխատեսելի, տնտեսվարողները չեն կարող հասկանալ թե առաջիկայում գների ինչ փոփոխություն կլինի: Եթե մասնագետները կարողանան ճշգրիտ հաշվարկել գնաճը, կապահովեն կայունություն, օրինակ՝ ընկերությունները կարող են սահմանել իրենց գները, իսկ վարկատուները՝ կարգավորել տոկոսադրույքը: Սրանք են այն պատճառները, որոնք երկրների կառավարություններին մղում են պայքարելու գնաճի դեմ:

Բանալի բառեր՝ գնաճ, գնողունակություն, մրցունակություն, գների մակարդակ, վերաֆինանսավորման տոկոսադրույք, ազգային արժույթի փոխարժեք, Կենտրոնական բանկ:

УРОВЕНЬ ИНФЛЯЦИИ В РА В 2008-2020 ГГ.

Диана Геворгян

Резюме

Инфляция подрывает международную конкурентоспособность. Правительства пытаются снизить инфляцию разными способами, поскольку это приводит к перекосам и проблемам в экономике. Инфляция должна поддерживаться на самом низком уровне, чтобы люди в стране были уверены в ценности собственной валюты. Явление инфляции также может привести к снижению реальной стоимости сбережений при отрицательных реальных процентных ставках. Это означает, что процентная ставка не корректируется для повышения общего уровня цены. Когда из года в год инфляция становится непредсказуемой, экономисты не могут прогнозировать, каков будет уровень инфляции в ближайшем будущем. Если бы экономисты могли рассчитать инфляцию, то это обеспечило бы стабильность, а именно: компании могли бы устанавливать свои цены, а кредиторы – урегулировать процентные ставки. Этим обусловлена борьба мировых правительств с инфляцией.

Ключевые слова – инфляция, покупательская способность, конкурентоспособность, ценовой уровень, ставка рефинансирования, курс национальной валюты, Центральный банк.

INFLATION RATE IN RA DURING 2008-2020

Diana Gevorgyan

Abstract

Inflation undermines international competitiveness. Governments try to reduce inflation in many ways, as this leads to distortions and problems in the economy. It can reduce purchasing power and the level of demand. The phenomenon of inflation can also lead to a decrease in the real value of savings at negative real interest rates.

This means that the interest rate is not adjusted to increase the overall price level. When inflation is unpredictable from year to year, economists can not predict what the rate of inflation will be in the near future. When people can accurately calculate inflation, it would be possible to rely on self-defence; for example, companies can set their own prices and lenders can adjust interest rates. Because of this, I think the government wants to fight inflation. These are reasons why governments may want to fight inflation.

Key words – purchasing power, competitiveness, price level, refinancing rate, national currency rate, Central Bank.